



17. ՕԽՏԸ ՄՈՒԿԱԾ

Օխտը մուկ ին էլի, ալուր ին կիտի ու ֆառ ին քցի. ընգել էր պստի մկին: Էն էլ էրթում է, որ խմոր անի, ընգնում է խմորի մեջն ու սատկում: Վեցց մուկն որ տեհում են, ֆիքր են անում, ֆիքր են անում, մոխրակատար են ըլնում:

Մե դանա ճնջուղ գալիս է, նստում է բաշին ու էղ մկանուն ասում է.—Մո՛ւկ ախարտանք, չմար եք մոխրակատար էլի:

Մկանուց մեզն ասում է.

—Որն ասեմ, որն ասեմ,
Մոխրակատար մկիկն ասեմ,
Բա չե՛ս զիտի,
Մկան ու պստիկը սատկել է:

Ճնջուղը ֆիքր է անում, ֆիքր է անում, Հաճկը փուք է ընգնում, էրթում է, նստում է մե ծառի:

Ծառը հարցնում է.—Այ ճնջուղ, Հաճկդ հո՞ւր է փուք ընգի:
Ճնջուղն ասում է.

—Որն ասեմ, որն ասեմ,
Մոխրակատար մկիկն ասեմ,
Հաճկը փուք ընգան ճրտիկն ասեմ,
Բա չե՛ս զիտի,
Մկան ու պստիկը սատկել է:

Ծառը ֆիքր է անում, ֆիքր է անում, տերեւը վեր է տալիս:

Մե էծ գալիս է ծառի տակը Հարձելու, տեհում է ծառը տերեւը Հիսղագ վեր է տվի, Հարցնում է ծառիցը.—Այ ծառ, տերեւդ հո՞ւր ես վեր տվի:

Ծառն ասում է.

—Որն ասեմ, որն ասեմ,
Մոխրակատար մկիկն ասեմ,
Հաճկը փուք ընգան ճրտիկն ասեմ,
Տերեւ վեր տվան ծառիկն ասեմ,
Բա չե՛ս զիտի,
Մկան ու պստիկը սատկել է:

Էծը ֆիքր է անում, ֆիքր է անում, պոզը կոտրվում է:

Էնդատեն էրթում է գեղը, որ ջուր խմի, գեղը տեհում է իծու պո-
ղը կոտրվել է, հարցնում է.—Այ էծ, պողդ հո՞ւր է կոտրվի:
էծն ասում է.

—Որն ասեմ, որն ասեմ,
Մոխրակատար մկիկն ասեմ,
Հաճկը փուք ընզան ճրտիկն ասեմ,
Տերև վեր տվան ծառիկն ասեմ,
Պող կոտրվան իծիկն ասեմ,
Բա չե՛ս գիտի,
Մկան ու պստիկը սատկել է:

Գեղը Փիքր է անում, Փիքր է անում, հարուն է քանդում:
Մե ախչիգ գալիս է գեղիցը ջուր լցնի, տեհում է գեղն հարուն է,
քանդի, հարցնում է.—Այ գեղ, հո՞ւր ես հարուն քանդի:
Գեղն ասում է.

—Որն ասեմ, որն ասեմ,
Մոխրակատար մկիկն ասեմ,
Հաճկը փուք ընզան ճրտիկն ասեմ,
Տերև վեր տվան ծառիկն ասեմ,
Պող կոտրվան իծիկն ասեմ,
Հարուն քանդան գեղիկն ասեմ,
Բա չե՛ս գիտի,
Մկան ու պստիկը սատկել է:

Ախչիգը Փիքր է անում, Փիքր է անում, կուժը կպչում է հուսիցը
ու տուն է գալիս:

Պառավ նանն օր ջահրա մանելիս է ըլնում, հարցնում է.—Այ
ախչիգ, կուժը հո՞ւր է կպի հուսիցդ:
Ախչիգն ասում է.

—Որն ասեմ, որն ասեմ,
Մոխրակատար մկիկն ասեմ,
Հաճկը փուք ընզան ճրտիկն ասեմ,
Տերև վեր տվան ծառիկն ասեմ,
Պող կոտրվան իծիկն ասեմ,
Հարուն քանդան գեղիկն ասեմ,
Կուժ հուս կպան ախչիգն ասեմ,
Բա չե՛ս գիտի,
Մկան ու պստիկը սատկել է:

Պառավը Փիքր է անում, Փիքր է անում, մանիջը կպչում է ձե-
ռիցը: Ես պառավը էրթում է ժամ:

Ժամվորը տեհում է ու հարցնում է.—Այ պառավ, մանիջդ հո՞ւր
է կպի ձեռիցդ:

Պառավն ասում է.

—Որն ասեմ, որն ասեմ,
Մոխրակատար մկիկն ասեմ,
Հաճկը փուք ընզան ճրտիկն ասեմ,
Տերև վեր տվան ծառիկն ասեմ,
Պող կոտրվան իծիկն ասեմ,
Հարուն քանդան գեղիկն ասեմ,
Կուժ հուս կպան ախչիզն ասեմ,
Մանիջ կպան ձեռիկն ասեմ,
Բա չե՛ք զիտի,
Մկան ու պատիկը սատկել է:

Ժամվորը ֆիքր է անում, ֆիքր է անում, հիրար է կպչում:
Աստծուց հիրեք ինձոր վեր ընզավ, մեզն՝ ասողին, մեզը՝ լոռ-
դին, մեզն էլ՝ հանզան դնողին:

